

4261

Ulipunkit

Uunzo

1875

891.71

U-49

U. Niemeläpöytä

1903

ՀՐԱՏ. ՄԻՐՋԱ-ԽՈՒՒՄԻՆԻՍՏՐԱՏԻ.

„ԱՍՏՂԸ“

(ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԷՔԵԱԹ)

Վ. ՎԵՐԵՍԱԵՎԻ

ԹԱՐԳՄ. Ա. Տ.-Պ

891.71

4-49

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ.
ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳԻ ՏՊԱՐԱՆ

891.71-3

վ-49


4

ՀՐԱՏ. ՄԻՐԶԱ-ԽՈՒԲԼԱՐԻ.

„ԱՍՏՂԸ“

(ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԷՔԵԱԹ)

Վ. ՎԵՐԵՍԱԵՎԻ



Մ.-ՊԵՏԵՐՐՈՒՐԳ
«ԳՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»

2011

1276

„ԱՍՏՂԸ“

Հին պատմութիւն է այս, որ պատահել է վաղ ժամանակներում, հեռաւոր, անծանօթ մի երկրում:

Դարաւոր, խաւար գիշերը թագաւորում էր այդ երկրում. մզլահոտ մառախուղները բարձրանում էին ճախճախուտ գետնից և տարածւում էին օդի մէջ. մարդիկ ծնում, մեծանում, սիրում ու մեռնում էին թանձր խաւարում: Բայց երբեմն փշում էր քամին ու ցրում երկրի ծանր գոլորշիները, և այն ժամանակ պայծառ աստղերը հեռու երկնքից նայում էին մարդկանց վրայ: Լինում էր ընդհանուր տօն օր: Առանձին-առանձին, նկուղների նմանո՞ղ իրենց բնակարաններում նստած մարդիկ հաւաքւում էին հրապարակների վրայ և օրհներգներ ուղղում երկրնքին. հայրերն իրենց որդկերանց ցոյց էին տալիս աստղերը և ուսուցանում էին, որ դէպ աստղերը ձգտելու մէջն է կայանում մարդու կեանքն ու երջանկութիւնը. պատանիներն ու աղջիկները անյագ կարօտով երկինքն էին նայում, այս խաւարապատ երկրից հոգով դէպի այնտեղ սլանում: Աստղերին էին աղօթում քուրմերը, բանաստեղծները աստղերն էին երգում, գիտուններն ուսումնասիրում էին աստղերի ճանապարհը, նրանց թիւը, մեծութիւնը և նշանակալից յայտնութիւններ անում: Բանից զուրս էր զալիս, որ աստղերը յամբօրէն, բայց անընդհատ մօտենում էին երկրին. կատարելապէս վստահելի աղբիւրների ասածի համաձայն, տասն հազար տարի

Дозволено цензурою. С.-Петербургъ, 6 Юня 1903 года.



4540
41

Գ

առաջ դժուարաւ կարելի էր մէկուկէս քայլ հե-
ռաւորութեան վրայ նկատել ժպիտը երեխայի
դէմքի վրայ. իսկ այժմ հեշտութեամբ կարելի է
ամբողջ երեք քայլի վրայ տարբերել այդ: Տարա-
կոյս չը կար, որ մի քանի միլիոն տարուց յետոյ
երկինքը կը լուսաւորէ պայծառ լուսով, և երկրի
վրայ կը գայ յաւիտենական, ճաճանչափայլ լուսոյ
թագաւորութիւնը: Եւ ամենքը համբերութեամբ
այդ երջանիկ ժամանակին էին սպասում ու մեռ-
նում էին՝ յոյսը սրտներում:

Այսպէս, երկար տարիներ, ապրում էին մար-
դիկ, հանգիստ ու խաղաղ, և քաղցը հաւատքն առ
աստղերը ջերմացնում էր մարդկանց կեանքը:

Մի անգամ աստղերը փայլեցին երկնքում
արտասովոր վառ գոյնով: Մարդիկ խոնուեցին
հրապարակների վրայ, լուռ երկիւղածութեամբ
հոգով դէպի յաւիտենական լոյսը վերամբառնա-
լով: Եւ յանկարծ, ամբոխի միջից հնչեց մի ձայն.

— Եղբայրներ, — ասաց այդ ձայնը. — ինչպէս
լոյս ու սքանչելի է այնտեղ՝ բարձր երկնային
տափաստանում. իսկ այստեղ՝ մեզ մօտ, ինչպէս
միզամած է ու խաւար: Հիւժում-մաշում է իմ
հոգին, նա այստեղ կեանք չունի, ցանկութիւն
չունի այս մշտական խաւարի մէջ մնալու: Մեզ
ինչ, որ մի քանի միլիոն տարուց յետոյ մեր հե-
ռաւոր յետնորդների կեանքը կը լուսաւորուի
անանց լուսով: Մեզ, մեզ է հարկաւոր այդ լոյսը,
օդից ու սնունդից էլ, մօրից ու սրտի-սիրածից էլ
աւելի: Ո՛վ գիտէ, կարող է պատահել որ մի ճա-
նապարհ կայ դէպ այդ աստղերը, գուցէ կարող

ենք պոկ տալ երկնքից և տնկել-բարձրացնել նրանց
այստեղ, մեր մէջ, ի մեծ հրճուանս ամբողջ երկրի:
Երթանք հապա այդ ճանապարհը որոնենք, կեան-
քի համար լոյս փնտռելու երթանք:

Լուսթիւնը տիրեց ժողովրդեան մէջ:

— Այդ ո՞վ էր խօսում, — փսփսալով հարցրին
իրար մարդիկ:

— Ադէի՛ն է, մի գիժ ու յամառ պատանի:
Գարձեալ մի ժամանակ տիրեց լուսթիւն:

— Սիրելի պատանի, — ասաց վերջապէս խե-
լօքների վարժապետ, գիտութեան ջահ ծերունի
Տուրը: — Ամենքիս էլ հասկանալի է քո թա-
խիժը — ժամանակին ո՞վ չէ բռնուել այդ հիւան-
դութեամբ: Բայց մարդն անկարող է երկնքից
պոկ տալ աստղը. երկրի ծայրը եզերում է խոր
անդունդներով ու անյատակ խորխորատներով,
որոնց միջից ճամբայ չը կայ դէպի աստղերը:
Այդպէս է ասում փորձն ու իմաստութիւնը:

— Ո՛չ թէ ձեզ, ո՞վ իմաստուններ, ձեզ չէ՛ որ
դիմում եմ ես, — վրայ բերաւ Ադէիլ: — Ձեր փոր-
ձառութիւնը սպիտակ փառով պատել է ձեր
աչքերը և ձեր իմաստութիւնը կուրացրել է ձեզ:
Ես ձեզ եմ կանչում, երիտասարդ և համարձակ
հոգիներ, ձեզ, որ գառամած, ծերացած իմաս-
տութեան տակ ճնշուել չէք դեռ ես:

Եւ նա պատասխանի էր սպասում:

Մի բանիսն ասին. — Մենք ուրախութեամբ
կ'երթայինք, բայց դէ մենք մեր ծնողների աչքի
լոյսն ենք և ուրախութիւնը, և չենք ուզում նրանց
վիշտ պատճառներ: Միւսներն ասին. — Մենք ու-

ըրախուժեամբ կ'երթայինք, բայց դէ նոր ենք սկսել շինել մեր տները և ուզում ենք վաղօրօք վերջացնել շինութիւնները: Ոմանք էլ ասին.—Ողջոյն քեզ, Աղէիլ, մենք գալիս ենք քեզ հետ:

Եւ շատ պատանիներ ու աղջիկներ վերկացան ու հետեցին Աղէիլին,—գիմեցին դէպի մթին, արհաւրալից հեռաստան տեղեր, և մութը պատեց նրանց:

*

Չատ ժամանակ անցաւ: Գնացողները ոչ մի լուր չը կար: Մայրերը լաց էին լինում անմտօրէն կորուստի մատնուած իրենց որդիները վրայ: Իսկ կեանքը սահում-անցնում էր առաջուայ նման: Գարձեալ նոյն թանձր խաւարի մէջ մարդիկ ծնում, մեծանում, սիրում ու մեռնում էին այն անդորր յուսով, թէ հազարաւոր տարիներից յետոյ լոյս պիտի գայ երկրի վրայ:

Բայց ահա մի օր մթագնած հորիզոնի վրայ երկինքը թոյլ կերպով շառագունեց ըոպէսպէս փայլփլող, զողոռչուն լուսով:

—Այդ ինչ է այնտեղ,—գարմանքով հարցրին իրար մարդիկ, փողոցներում և հրապարակների վրայ խոնուած:

Հորիզոնի վրայ երկինքը ժամ առ ժամ աւելի էր լուսաւորում, երկնագոյն ճառագայթները սուրում էին մառախուղի միջից, ամպերը ճեղքում-անցնում էին և լայնատարած լոյս սրվում երկնային տափաստանի վրայ: Թանձր սև ամպերը, սարսափահար, քուլայ-քուլայ բարձրանալով ու հրմշտկուելով՝ փախան հեռուն. և յաղ-

թական ճառագայթները աւելի ու աւելի պայծառօրէն տարածուեցին երկնքում ու մի չը տեսնուած ուրախութեան գրգիռ անցաւ երկրի վրայով:

—Այդպիսի լոյս կարող է միայն յաւիտեանական երկնային աստղերից լինել,—մտմտալով արտասանեց ծերունի քուրմ Սատգոյ-ը:

—Բայց ինչպէս կարող է այդ լոյսը երկրիս վրայ ցած ընկնել,—վրայ բերեց խելօքների վարժապետ, գիտութեան ջահ Տսուր-ը: —Մենք ճամբայ չունենք դէպ աստղերն երթալու և աստղերը ճամբայ չունին մեզ մօտ գալու համար:

Իսկ երկինքը շարունակ լուսանում ու լուսաւորում էր. և յանկարծ հեռուն, հորիզոնի վրայ, երևաց աչք կուրացնելու չափ պայծառ մի կէտ:

—Աստղը, աստղը գալիս է,—ուրախ աղաղակով հնչեց ողջ քաղաքը և մարդիկ ընդ առաջ վազեցին դէպի հեռում փայլող կէտը:

Յերեկուայ նման պայծառ ճառագայթները հալածում էին իրենց առջևից ժահահոտ մէզը. ցնցոտիների նմանօր, պատառ-պատառ եղած մառախուղը ցրիւ էր գալիս և սուզում գետին, մինչդեռ ճառագայթները հարուածում, մաս-մաս էին բաժանում նրանց և հալածում դէպ երկրի խորքերը: Լուսաւորուեց և մաքրուեց երկրի ողջ հեռաստանը և մարդիկ տեսան, թէ որքան ընդարձակ է տարածութիւնը, որքան ազատ տեղ կայ երկրի վրայ և որքան եղբայր-մարդիկ են ապրում իրենց չորս կողմը:

Եւ մարդիկ շտապով դիմաւորելու գնացին իրենց ընդ առաջ եկող աստղին:

ձանապարհովն ընթանում էր Աղէիլը, յամ-
րաքայլ, և երկնքից խլած աստղի ճառագայթից
բռնած՝ բարձր պահում էր: Միայնակ էր նա:

—Իսկ միւսներն ուր են,—հարցրին:

—Ամենքն էլ կորուստի մատնուեցին,—պա-
տասխանեց Աղէիլը ընդհատ ձայնով:—Նրանք մե-
ռան կորան անդունդներում ու խորխորատնե-
րում, հարթելով երկնքի ճանապարհը:

Սաստիկ ուրախացած ամբոխը շրջապատեց
աստեղատարին: Աղջիկները նրա վրայ ծաղիկ էին
ցանում. ամեն կողմից հնչում էին ոգևորուած
աղաղակներ.—փառք Աղէիլին, փառք ու պար-
ծանք լոյս բերողին:

Նա մտաւ քաղաքը և կանգ առաւ հրապա-
րակի վրայ՝ լուսափայլ աստղը ձեռքին բարձր
պահած: Եւ ողջ քաղաքը լցուեց ցնծութեան ա-
ղաղակներով:

*

Օրեր անցան: Աստղը առաջուայ նման պայ-
ծառ փայլում էր հրապարակի վրայ, Աղէիլի
բարձր բռնած ձեռքում: Բայց քաղաքի մէջ վա-
ղուց արդէն դադարել էր ցնծութեան աղաղակը:
Մարդիկ անցուղարձ էին անում բարկացած ու
մռայլ, աչքերնին վայր ձգած, և աշխատում էին
իրար վրայ չը նայել: Երբ ստիպուած լինէին
հրապարակովն անցնել ու տեսնել Աղէիլին, կոյր
ատելութեամբ վառում էր նրանց աչքերը: Հէր
լսում երգի ձայն, չէր լսում աղօթք: Աստղից
հալածական եղած մղլահոտ մառախուղի փո-
խարէն տարածուել էր քաղաքի վրայ սև, զրժ-

նեայ թշնամութիւնը մի անտեսանելի մէգի նման,
որ խտանում, աճում ու տարածում էր և նրա
ճնշման տակ ապրելն անհնար էր դարձել:

Եւ անա մէկը՝ դառնապէս կոծալով, դէպի
հրապարակը վազեց. նրա աչքերը կրակ էին
կտրել, դէմքն այլանդակուած էր հոգին մաշող
չարախնդութիւնից:

—Թող կորչի աստղը: Թող կորչի անիծեալ
աստեղատարը,—մոլեգին կատաղութեամբ գո-
ռաց նա:—Եղբայրներ, միթէ ձեր ամենքի սիրտը
չէ, որ իմ բերանով իբ բողոքն է արտայայտում՝
զոռալով—[Թող կորչի աստղը, [Թող կորչի լոյսը.
Նա զրկեց մեզ մեր ապրուստիցն ու մեր ուրա-
խութիւնից: Մենք ապրում էինք խաւարում հան-
գիստ ու անդորր, սիրում էինք մեր դուրեկան
բնակարանները, մեր խաղաղ կեանքը: Իսկ հի-
մա նայեցէք—այդ ինչ պատահեց: Լոյսը եկաւ
—և այժմ մենք ոչ մի բանի մէջ հաճոյք չենք
գտնում: Կեղտոտ, այլանդակ կոյտերի նման բարձ-
րացած են տները, ծառի տերեւները դժգունած
են ու բորբոս բռնած՝ ինչպէս գորտի փորի մաշկը:
Նայեցէք գետին,— նա ամբողջովին ծածկուած է
արիւնոտ աղտեղութեամբ: Ո՛րտեղից է արիւնը,
ո՞վ է իմանում: Բայց նա թաթաւած է մեր ձեռ-
ներին, նրա հոտը հետեւում է մեզ ճաշի ժամա-
նակ և մեր երազների մէջ, այդ հոտը [Թունա-
ւորում և ուժասպառ է անում աստղերին ուղղած
մեր խոնարհ աղօթքը: Եւ ոչ մի տեղ չենք կա-
րող ապաւինել այդ յանդուգն, ամեն տեղ մուտք
գործող լուսոյ առջևից: Նա թափանցում-մտնում

է մեր տները և ահա մենք տեսնում ենք, որ ամենքը աղտեղութեամբ թաթաւած են, կեղտը կերել է պատերը, լուսամուտները նրանով են շրջապատուած, անկիւններում դիզուած են գարշահոտ կոյտեր: Մենք այլ ևս մեր սրտի-սիրածներին համբուրել չենք կարող—Աղէիլեան լուսոյ առաջ նրանք գերեզմանական որդից աւելի գարշելի են դարձել: Նրանց աչքը դժգոյն է, ինչպէս զիջածճիի աչքը. փափուկ մարմինները բիծերով են պատած և բորբոսը թափուում է վրաներից: Ու այլ ևս մէկ միւսի վրայ նայել չենք կարող—մեր տեսածը մարդ չէ, այլ մարդու արատաւորութիւն... Ապրելն անհնար է: Թո՛ղ գնակորչի աստեղատարը, և թո՛ղ կորչի լոյսը:

—Թող կորչի,— ձայնակցեց նրան ամբոխը: —Կեցցէ խաւարը: Աստղերի լոյսը միայն վիշտ ու նզովք է բերում մարդկանց... Մահ աստեղատարին:

Եւ ամբոխը սպառնալից կերպով խոնուեց և լուսոյ հասցէին ուղղած մեծ պարսաւանքի առաջ իր սարսափը խեղդելու համար կատարի մոնչիւնով աշխատում էր հարբել. և Աղէիլի վրայ յարձակուեց ամբոխը: Մակայն աստեղատարի ձեռքում աստղը լուսաւորում էր սպանիչ-չեղմ կերպով և մարդիկ չկարողացան նրան մօտենալ:

—Կացէք, եղբայրներ, — հնչեց յանկարծ ծերունի բուրմ Սատգոյ-ի ձայնը: — Լոյսին հայհոյելով՝ ձեր հոգուն ծանր մեղք էք անում: Միթէ աստղերին չէ, որ մենք աղօթում ենք, նրանցով չէ, որ մենք ապրում ենք: Սակայն դո՛ւ էլ, որ

դիս,—ասաց նա՝ Աղէիլին դառնալով,—դո՛ւ էլ փոքր յանցանք չը գործեցիր, աստղը երկրի վրայ բերելովդ: Արդարև մեծ բրահման ասել է—«երանի նրան, ով որ ձգտում է դէպի աստղերը»: Բայց իրենց իմաստութեամբը յանդգնացած մարդիկ սխալ հասկացան ընդհանուրից գովաբանուածին: Նրա աշակերտների աշակերտները ամենիմաստի մութն խօսքերի իմաստը այսպէս են բացատրում.— աստղերին պէտք է ձգտի մարդս միայն ևեթ իր մտքով. իսկ երկրի վրայ խաւարը նոյնքան սուրբ է, որքան երկնքում սուրբ է լոյսը: Եւ ահա այդ ճշմարտութիւնն անարգեցիր դու քո ըմբոստ մտքովդ: Զղչան ուրեմն, որդիս, ձգիր աստղը և ահա երկրիս վրայ կը թագաւորէ նախկին խաղաղութիւնը:

—Իսկ դու կարծում ես որ եթէ ձգեմ աստղը, երկրի վրայ խաղաղութիւնն արդէն մշտապէս կորել չէ,— ժպտալով հարցրեց Աղէիլը:

Եւ մարդիկ սարսափով զգացին, որ Աղէիլը ճիշտ է ասում, որ նախկին խաղաղութիւնն այլ ևս երբէք դառնալու չէ:

Այն ժամանակ առաջ անցաւ ծերունի Տուրը, խելօքների վարժապետը, գիտութեան ջահը:

—Անմիտ գործ բռնեցիր դու, Աղէիլ, և անկարելի է որ քո անմտութեան պտուղներն ինքդ չը տեսնես,—ասաց նա: —Բնութեան օրէնքով կեանքը զարգանում է դանդաղօրէն, և հեռաւոր աստղերը յամբօրէն են մօտենում կեանքին: Նրանց աստիճանաբար մօտենալու համեմատ, նոյնպէս աստիճանաբար կերպաբանափոխում է կեանքը:

Բայց դու չուզեցիր սպասել. դու քո պատասխանատուութեամբ պոկ տուիր երկնքից աստղը և նրանով պայծառօրէն լուսաւորեցիր կեանքը: Հետեանքն ինչ եղաւ. կեանքի անկանոնութիւնը խիստ աչքի է ընկնում, կեղտոտ է երևում նա, ողորմելի ու այլանդակ: Բայց միթէ մենք առաջուց չէինք զգում, որ այդպէս է. և միթէ խընդիրը զրանումն էր: Մեծ իմաստութիւն չէ երկնքից պոկ տալ աստղը և նրանով լուսաւորել կեանքը: Ո՛չ. նուիրուիր կեանքը կերպարանափոխելու սե, ծանրատար աշխատանքին, այն ժամանակ կը տեսնես թէ հեշտ է դարերով նրա վրայ փակած կեղտը մաքրելը, թէ արդեօք կարելի է թէկուզ ճաճանչափայլ լուսոյ մի ամբողջ ծովով լուանալ այդ կեղտը: Որքան պատանեկան անփորձութիւն կար զրանում, որքան անհասկացողութիւն կեանքի պայմաններին ու օրէնքներին: Եւ ա՛նա, ուրախութեան փոխարէն վիշտ բերիր դու երկրիս վրայ, խաղաղութեան փոխարէն՝ պատերազմ: Իսկ դու կարող էիր, և այժմ էլ կարող ես, օգտակար լինել կեանքին.— ձգիր-ջարդիր աստղը, նրանից վերցուր թէկուզ մի ամենաչնչին պատառ, և այդ պատառը կը լուսաւորէ կեանքը այնքան, որքան հարկաւոր է նրա վրայ անելիք բեղմնաւոր և խելացի աշխատանքի համար:

—Ուղիղն ասիր դու, Տուրը,—պատասխանեց Ազէիլը:—Աստղը այստեղ ոչ թէ ուրախութիւն, այլ տրամուլթիւն բերաւ, ոչ թէ խաղաղութիւն՝ այլ պատերազմ: Ես այդ չէի սպասում, երբ սեպ ժայռերը ճանկուելով՝ բարձրանում էի դէպի աստ-

ղերը, երբ իմ շուրջն ընկերներս սայթաքում ու անդուզն էին ընկնում... Ես մտածում էի թէ մեզանից գէթ մէկնումէկը կը հասնի իր նպատակին և երկրի վրայ կը բերի աստղը և նրա պայծառ լուսոյ տակ երկրիս վրայ կը գայ պայծառ, լուսաւոր կեանք: Բայց երբ կանգնեցի այս հրապարակի վրայ, երբ երկնային աստղի լուսով տեսայ մեր կեանքը, ես հասկացայ, որ լոյսը հարկաւոր է ձեզ միայն անհասանելի երկնքի վրայ, որպէս զի կեանքի հանդիսաւոր բոպէներին նրա առաջ ծունը իջնէք: Երկրի վրայ ձեզ համար ամեն բանից աւելի թանկ է խաւարը, որի մէջ դուք իրարից թագնուել կարենաք, և որ գլխաւորն է, որպէս զի ինքնագոհ լինէք, բաւական մնաք ձեր խաւար, փտած կեանքից: Բայց և այնպէս, ես զգում եմ այժմ շատ աւելի, քան թէ առաջ էի զգում, որ այսպիսի կեանքով ապրելն անհնար է, որ նա անդադար բողոք է բառնում երկնքին արիւնոտ կեղտի ամեն մի կաթիլի, խոնաւ բորբոսի ամեն մի բիծի միջոցով: Այդ մի կողմը. կարող եմ հանգստացնել ձեզ, որ իմ աստղը երկար չի լուսաւորելու: Այնտեղ, հեռու երկնքում, կախուած են աստղերը և ինքն ըստ ինքեան լուսաւորում են: Իսկ երկնքից խլուած և երկրի վրայ բերուած աստղը կարող է լոյս տալ միայն նրա բռնողի արիւնովը սնուելով: Ես զգում եմ, որ իմ կեանքը մարմնիս միջով՝ ինչպէս մի պատրոյգի միջով, բարձրանում է դէպի աստղը և այրում նրա մէջ. երկար չի քաշի, ու իմ կեանքն ամբողջովին կ'այրուի. իսկ աստղը ոչ

որի յանձնել չի կարելի. նա կը հանգչի իր բունոտի կեանքի հետ միասին. և ամեն ոք պէտք է նոր ի նորոյ աշխատէ ձեռք բերել աստղը: Արդ, ես ձեզ եմ դիմում, ազնիւ և խիզախ հոգիներ, ձեզ, որ ճանաչելով լոյսը՝ խաւարումն ապրել չէք ուզենայ այլ ևս: Գնացէք այն հեռու ճանապարհը և նոր աստղեր բերէք այստեղ: Երկար ու դժուարին է ուղին, այնուամենայնիւ ձեզ համար դա արդէն աւելի հեշտ կը լինի, քան թէ մեզ համար էր, մենք, որ առաջինը կորուստի մատնուեցանք այդ ճանապարհի վրայ, — այժմ արահետը ձգուած է, ուղին նախագծուած: Եւ դուք կը վերադառնաք աստղերով միասին, և երկրի վրայից նրա լոյսն այլ ևս չի անյայտանայ, ու այն անողոր լոյսի առաջ անհնարին կը դառնայ այժմեան կեանքի պէս կեանքը. ճահիճները կը ցամաքին, կը չքանայ սև մառախուղը, ծառերը պայծառ գոյնով կը կանաչեն, և նրանք, որոնք այժմ այդպէս կրակ կտրած յարձակում են աստղի վրայ, կամայ-ակամայ պիտի ձեռնամուխ լինեն իրենց կեանքի վերանորոգմանը: Զէ որ սրանց ամբողջ թշնամութիւնը նրանից է առաջացել, որ լոյսի առաջ — նրանք այդ գգում են — անկարելի է ապրել այնպէս, ինչպէս որ այժմ են ապրում իրենք: Եւ կեանքը կը բարձրանայ ու կը մաքրուի և սքանչելի կ'երևայ նա մեր արիւնով կերակրուած աստղերի լուսոյ առաջ: Եւ երբ, վերջապէս, աստղալից երկինքը կ'իջնի մեզ մօտ և կը լուսաւորի կեանքը, նրան իր լոյսին արժանի կը համարի, այն ժամանակ այդ յաւիտե-

նական, անանց լոյսը կերակրելու համար այլ ևս հարկաւոր չի լինի մեր արիւնը:

Աղէիլի ձայնը կտրուեց. արեան վերջին կաթիլները քամուեցին նրա գունաթափ դէմքից: Աստեղատարի ծնկները ծալուեցին ու նա ընկաւ, և նրա հետ ընկաւ աստղը, — ընկաւ, թշտաց արիւնոտ ազտեղութեան մէջ և հանգաւ:

Ու սև խաւարը գրոհ տալով ամեն կողմից՝ պատեց հանգած աստղը. գետնից բարձրացաւ նոր կեանք առած մէզը և քուլայ-քուլայ բարձրացաւ օդի մէջ: Եւ հեռու երկնքի վրայ հեռաւոր, վատուժ և անվտանգ աստղերը մէզի միջով լոյս էին տալիս ողորմելի, վախկոտ պծառների նման:

*

Տարիներն անցնում էին: Առաջուայ նման մարդիկ ծնում, դարգանում, սիրում ու մեռնում էին մզլահոտ մառախուղի մէջ. առաջուայ նման հանգիստ ու խաղաղ էր թւում կեանքը: Բայց խորին անհանգստութիւնն ու անբաւականութիւնը առաջուայ պէս մթութեան մէջ մաշում էին կեանքը: Մարդիկ աշխատում էին ու չէին կարող մոռանալ, որ մի ժամանակ պայծառ աստղը լուսաւորել էր պայծառ լուսով: Նախկին մեղմիկ ուրախութիւնը թունաւորուած էր, խարէութիւնը խոր արմատներ էր ձգել ամենքի մէջ: Հեռաւոր աստղերին ջերմեռանդութեամբ աղօթելու միջոցին՝ մարդիկ սկսում էին մտածել. — եկ տես, որ յանկարծ մի ուրիշ անմիտին մէկը դուրս գայ և այն աստղը այստեղ, մեզ մօտ բերի: Եւ նրանց լեզուն փաթիփաթ

ընկաւ ու տազնապալի դողը փոխարինեց ջերմե-
 ռանդ աղօթքին: Հայրը սովորեցնում էր որդուն,
 թէ՛ դէպ աստղերը ձգտելու մէջն է կայանում
 մարդուս կեանքն ու երջանկութիւնը,—բայց յան-
 կարծ նրանում ըոպէսպէս ծագում էր այն միտքը,
 թէ չը լինի իրօք բորբոքուի ձգտումը դէպ աստ-
 ղալից լոյսը, և որդին՝ Աղէիլի նման, գնայ աստ-
 ղի քամակից և նրան բերի երկրիս վրայ: Եւ հայրը
 շտապում էր որդուն բացատրել որ լոյսը, իհարկէ,
 լաւ բան է, բայց նրան երկրի վրայ բերելու փորձ
 անելն անմտութիւն է, թէ այդպիսի անմիտներ
 գտնուեցին, բայց նրանք կորան անփառունակ,
 առանց որևէ օգուտ բերելու կեանքին:

Քուրմերն էլ այդ էին սովորեցնում մարդ-
 կանց. այդ էին ապացուցանում գիտունները: Բայց
 նրանց քարոզները գուր էին—ժամանակ առ ժա-
 մանակ լուր էր տարածւում, թէ այս ինչ պա-
 տանին կամ այն ինչ աղջիկը հեռացել է հայրե-
 նական բոյնից: Դէպի ուր: Մի գուցէ Աղէիլի ցոյց
 տուած ուղիով: Եւ մարդիկ սարսափով զգում էին,
 որ եթէ դարձեալ լոյսը վայլէ երկրիս վրայ,
 այն ժամանակ նրանք կամայ-ակամայ մի ահա-
 զին աշխատանքի պիտի ձեռնարկեն, և այդ լոյ-
 սի առջևից ոչ մի տեղ չի կարելի թագնուել: Ու
 անհանգիստ վրդովմամբ նայում էին նրանք դէ-
 պի հեռաւոր, մութն հորիզոնը, և նրանց թւում
 էր թէ այնտեղ սկսում է արդէն երևալ մօտեցող
 աստղերի զողոթջուն լուսոյ ցուրը...



Ե Ր Ձ

4540
41

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

4261

2013

